

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N « ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12»

ք. Երևան

20 փետրվարի 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Բունիաթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայրերի ասֆալտապատման ծածկի վերանորոգման, փողոցների ճարտարապետական աշխատանքների որակի տեսչական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

Աստ

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **35000000 (Երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ 7000000 (Յոթ միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք) տոկոսի** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0.3 (զրո ամբողջ երեք տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410099
ՀՎՀՀ 02593108

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
ք. Արտաշատ Օգոստոսի 23փող. 21/3ա
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 61380420100
ՀՎՀՀ 04234959

Է. Կիրակոսյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Ն. Բունինյան



(ստորագրություն)

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պայմով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳԱՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	71351540/830	<p>1. Փողոցների ասֆալտապատում - ասֆալտապատում և ասֆալտապատման ծածկի տաշում ֆրեզով, բարձրում, փերափոխում թափոնափեր, ճաքացում, անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցող շերտի և խճե հիսքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի փերադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտապատման ծածկի և հիսքի քանդում, բարձրում, փերափոխում թափոնափեր, հիսքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերափերադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի վերին շերտի իրականացում հիֆց = 5սմ հաստությամբ (15 հար)</p> <p>3. Անձրևնորսիչների նիշերի ուղղում - Ասֆալտապատման ծածկի և հիսքի քանդում, բարձրում, փերափոխում թափոնափեր, հիսքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=15սմ, անձրևնորսիչի վերափերադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի վերին շերտի իրականացում հիֆց = 5սմ հաստությամբ (4 հար)</p> <p>4. Մայրթերի և բակային ճանապարհների վերանորոգում - Մայրթերի և բակային ճանապարհների ասֆալտապատման ծածկի քանդում, բարձրում, փերափոխում թափոնափեր, անհրաժեշտության դեպքում խճե հիսքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>5. Փոսային նորոգում մինչև 25 քմ - Մայրթերի և բակային ճանապարհների ասֆալտապատման ծածկի քանդում, բարձրում, փերափոխում թափոնափեր, անհրաժեշտության դեպքում խճե հիսքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p>	դրամ	2,656,300	1	բ. Երևան	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
2	71351540/831	<p>1. Փողոցների ասֆալտապատում - ասֆալտապատում և ասֆալտապատման ծածկի տաշում ֆրեզով, բարձրում, փերափոխում թափոնափեր, ճաքացում, անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցող շերտի և խճե հիսքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի փերադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտապատման ծածկի և հիսքի քանդում, բարձրում, փերափոխում թափոնափեր, հիսքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերափերադրում, մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով, ասֆալտապատման ծածկի վերին շերտի իրականացում հիֆց = 5սմ հաստությամբ (15 հար)</p>	դրամ	2,595,300	1	բ. Երևան	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

		<p>իրականացում հսիջ = 5սմ հաստությամբ (15 հատ)</p> <p>3.Անձրևորսիչների նիշերի ուղղում-Ասֆալտբեռնայն ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, հիմքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչի վերափոշադրում, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի վերին շերտի իրականացում հսիջ =5սմ հաստությամբ (3 հատ)</p> <p>4.Սայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Սայթերի և բակային ճանապարհների ասֆալտբեռնայն ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>5. Փոսային նորոգումներ մինչև 25 քմ -Սայթերի և բակային ճանապարհների ասֆալտբեռնայն ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>6. Փոսացում-Փոսի մաքրում մեխանիկական եղանակով, ա/բ ծածկի տեղադրում մինչև 5սմ հաստությամբ և գլորնում (2500քմ)</p>			բ. երևան	
3	71351540/832	<p>1.Փողոցների ասֆալտբեռնայն ծածկի վերանորոգում-Ասֆալտբեռնայն ծածկի տաշում ֆրեզով, բարձում, տեղափոխում թափոնափոշի, ճաքացում, անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցնող շերտի և խճի հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի տեղադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտբեռնայն ծածկի և հիմքի</p> <p>2. Դիվանդների ծածկի սայի նիշերի ուղղում-Ասֆալտբեռնայն ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, հիմքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=30սմ, ծածկի սայի վերափոշադրում, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի վերին շերտի իրականացում հսիջ = 5սմ հաստությամբ (20 հատ)</p> <p>3.Անձրևորսիչների նիշերի ուղղում-Ասֆալտբեռնայն ծածկի և հիմքի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, հիմքերի և կողային տարածքի բեկորնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչի վերափոշադրում, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի վերին շերտի իրականացում հսիջ =5սմ հաստությամբ (4 հատ)</p> <p>4.Սայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Սայթերի և բակային ճանապարհների ասֆալտբեռնայն ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>5. Փոսային նորոգում մինչև 25 քմ -Սայթերի և բակային ճանապարհների ասֆալտբեռնայն ծածկի քանդում, բարձում, տեղափոխում թափոնափոշի, անհրաժեշտության դեպքում խճի հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնոլիֆայով, ասֆալտբեռնայն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p>	դրամ	2,548,000	1	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

4	71351540/833	<p>1. Փողոցների ասֆալտեցումն ծածկի վերանորոգում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում մինչև 10 % հարթեցնող շերտի և խճե հիմքի իրականացում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտապերլորիչով (38000քմ)</p> <p>2. Դիպահորների ծածկի սալի նիշերի ուղղում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, ճաքայցում, բեփոնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերափոխում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերին շերտի իրականացում հմիջ = 5սմ հաստությամբ (15 հազ)</p> <p>3. Անձրևորսիչների նիշերի ուղղում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, փերափոխում թափոնապետ, հիմքերի և կողային փարածքի բեփոնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչ վերափոխում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (5 հազ)</p> <p>4. Մայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Մայթերի և բակային ճանապարհների ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>5. Փոսային նորոգում մինչև 25 քմ -Մայթերի և բակային ճանապարհների ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p>	դրամ 2,542,200	1	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ
5	71351540/834	<p>1. Փողոցների ասֆալտեցումն ծածկի վերանորոգում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, ճաքայցում, իրականացում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերադրում 4-5 սմ հաստությամբ ասֆալտապերլորիչով (38000քմ)</p> <p>2. Դիպահորների ծածկի սալի նիշերի ուղղում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, ճաքայցում, բեփոնապատում մինչև h=30սմ, ծածկի սալի վերափոխում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերին շերտի իրականացում հմիջ = 5սմ հաստությամբ (15 հազ)</p> <p>3. Անձրևորսիչների նիշերի ուղղում-Ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, փերափոխում թափոնապետ, հիմքերի և կողային փարածքի բեփոնապատում մինչև h=15սմ, անձրևորսիչ վերափոխում, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (4 հազ)</p> <p>4. Մայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Մայթերի և բակային ճանապարհների ասֆալտեցումն անհրաժեշտության դեպքում, բարձրում, փերափոխում թափոնապետ, անհրաժեշտության դեպքում խճե հիմքի իրականացում մինչև 10%, մակերեսի մշակում բիտումային էնուլիայով, ասֆալտեցումն ծածկի իրականացում 3-4 սմ հաստությամբ (3000քմ)</p> <p>5. Փոսային նորոգում մինչև 25 քմ -Մայթերի և բակային ճանապարհների</p>	դրամ 2,541,700	1	Շինարարական աշխատանքների կատարման ավարտ

	<p>իրականացում հմիջ = 5սմ հաստությամբ (12 հար)</p> <p>3. Ածրևորսիչների նիշերի ուղղում-Աաֆալբեբոնյա ծածկի և հիմքի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաբեր, հիմքերի և կողային րարածքի բեբունաաբարում միջև h=15սմ, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (4 հար)</p> <p>4. Աայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Աայթերի և բակային ճանապարհների աաֆալբեբոնյա ծածկի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=15սմ, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (2000բմ)</p> <p>5.-Փոսային նորոգում միջև 25 բմ -Աայթերի և բակային ճանապարհների աաֆալբեբոնյա ծածկի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=30սմ, ծածկի աայի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (3000բմ)</p>																						
10	<p>1.Փողոցների աաֆալբեբոնյա ծածկի վերանորոգում-Աաֆալբեբոնյա ծածկի րաշում ֆրեբով, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ճաբացում, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=10%, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (12 հար)</p> <p>2. Դիբառերի ծածկի աայի նիշերի ուղղում-Աաֆալբեբոնյա ծածկի և հիմքի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=30սմ, ծածկի աայի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (8 հար)</p> <p>3. Ածրևորսիչների նիշերի ուղղում-Աաֆալբեբոնյա ծածկի և հիմքի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, հիմքերի և կողային րարածքի բեբունաաբարում միջև h=15սմ, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (3000բմ)</p> <p>4. Աայթերի և բակային ճանապարհների վերանորոգում-Աայթերի և բակային ճանապարհների աաֆալբեբոնյա ծածկի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=15սմ, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (3000բմ)</p> <p>5.-Փոսային նորոգում միջև 25 բմ -Աայթերի և բակային ճանապարհների աաֆալբեբոնյա ծածկի բանդում, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=30սմ, ծածկի աայի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (3000բմ)</p>	71351540/839		դրամ	2,597,200	1													դրամ	4,081,100	1		
11	<p>1.Փողոցների աաֆալբեբոնյա ծածկի վերանորոգում-Աաֆալբեբոնյա ծածկի րաշում ֆրեբով, բարձում, րեղափոխում թափոնաաբեր, ճաբացում, ածրևորսիչի վերաբերաբարում միջև h=10%, ածրևորսիչի վերաբերաբարում, մակերեսի մշակում բիբումային էնոլիսիալով, աաֆալբեբոնյա ծածկի վերին շերտի իրականացում հմիջ =5սմ հաստությամբ (61500բմ)</p>	71351540/840		դրամ															դրամ				

Շինարարական
աշխատանքների
կատարման
ակարտ

Շինարարական
աշխատանքների
կատարման
ակարտ

	<p>Ճաբերի մշակում, մաքրում կերտից, փոշուց և ա/բ կտորներից խտացված օրի շիթով և մեխանիկական եղանակով, ճաբերի ցափակում բիտումապոլիմերային մածիկով (402187ճ)</p>						<p>աշխատանքների կատարման ավարտ</p>
<p>Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների տեխնիկական հսկողությունը</p>							
<p>1. պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող պատվեր առաջարկանքի (որի կազմմանը մասնակցում են տեխնիկորություն իրականացնող և կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչները) ծավալաբեր նախահաշվի հիման վրա և պետք է ապահովվի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:</p>	<p>2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:</p>	<p>3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը, ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կապալի պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին, - կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան - ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված կապալառուի կողմից, -ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի մասնագրեղին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին, -վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, - փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: Անհրաժեշտության դեպքում ներկայացնել նոր լաբորատոր փորձարկման -կատարել որակի և քանակի ամենօրյա հսկումը (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի շրջանակում, իրականացման - 2ինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար, կապալի - կատարել աշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության - կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, հավաստագրերը և այլ անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ զճագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, ակտերը, սերտիֆիկատները, - Պատվիրատուի ցուցումով չափագրել կատարման - պարտադիր ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկման շինանտաժային աշխատանքների իրականացման ընթացքում: 					
<p>Հաշվետվության ներկայացման պահանջներ</p>							

- Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:
- **Ընթացիկ հաշվետվությունները** ներկայացվում են շինարարական աշխատանքների ժամանակ ամսական կտրվածքով, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված անհրաժեշտ աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) և տեսանկարներ (էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ և այլ **Ավարտական հաշվետվությունը** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական արձանագրություն, անկողի նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) և տեսանկարներ (էլեկտրոնային կրիչով)
- **Ընթացիկ հաշվետվությունները** նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:
- Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական կատարողական արձանագրությունը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:

Պ Ա Տ Վ Ի Ի Ա Տ Ո Ւ

Երևանի բարձրապատարան
 Բ. Երևան, Արգիշտի փող. 1
 Կենտրոնական գանձապետարան
 Հ/Հ 900012410099
 ՀՎՀՀ 02593108



Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԷՏԱՄԼՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
 Բ. Արտաշատ Օգոստոսի 23փող. 21/3ա
 «Ամերիաբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 15700 61380420100
 ՀՎՀՀ 04234959



Ն. Բուրժոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

Հազար դրամ

Զ/Կ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության											Ընդամենը
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	
1	71351540/830	Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայրերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ		584.4	1,301.6	1,301.6	1,301.6	1,620.3	1,620.3	1,620.3	2,656.3	2,656.3	2,656.3	2,656.300
2	71351540/831	Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայրերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ		571.0	1,271.7	1,271.7	1,271.7	1,583.1	1,583.1	1,583.1	2,595.3	2,595.3	2,595.3	2,595.300
3	71351540/832	Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայրերի ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ		560.6	1,248.5	1,248.5	1,248.5	1,554.3	1,554.3	1,554.3	2,548.0	2,548.0	2,548.0	2,548.000

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
 (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն

18.02.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.1.0181.20

բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ -ի միջև կնքվելիք N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ - ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 274 851 700 (երկու հարյուր յոթանասուն չորս միլիոն ութ հարյուր հիսուն մեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի Կենտրոնական գանձապետարանի N 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) N ԵՔ-ԲՄԾՁԲ-20/12 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
 - 2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.
 - 3) սույն երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
 - 1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
 - 2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման
կենտրոնի ղեկավար



Սուրեն Քոչարյան

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ. (374 10) 56 11 11
Ֆ. (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND

18.02.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.1.0182.20

բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ -ի միջև կնքվելիք N ԵԲ-ԲՄԾԶԲ-20/12 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:
2. Երաշխիքով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ - ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 3,500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի Կենտրոնական գանձապետարանի N 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ԵԲ-ԲՄԾԶԲ-20/12 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) N ԵԲ-ԲՄԾԶԲ-20/12 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
 - 2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.
 - 3) սույն երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
 - 1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
 - 2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման
կենտրոնի ղեկավար

[Handwritten Signature]

Արմեն Քոչարյան



ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, 0010
 Վ. Սարգսյան փող. 2
 Հ. (374 10) 56 11 11
 Ֆ. (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND